3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո քաղաքացի Ժաննա Հակոբի Ջանոյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ժաննա Հակոբի Ջանոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Ժաննա Հակոբի Ջանոյանի միջոցների հաշվին:

30.11.2023

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«30» նոյեմբերի 2023 **թվականի** N 3020-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳԱՌՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՍԱՐԳՍԻ ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 19 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 139.18 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 108.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Գառնիկ Մարտիրոսի Դալլաքյանին և Հայկանուշ Սարգսի Դալլաքյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2027598 վկայական) Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի N 19 հասցեի տան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 139.18 (մեկ հարյուր երեսունինն ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին, 108.9 (մեկ հարյուր ութ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տուն, որը հաշվառված է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում 2023SEGPAJ ծածկագրով:

Քաղաքացի Գառնիկ Մարտիրոսի Դալլաքյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Գառնիկ Մարտիրոսի Դալլաքյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 23-ին N 17476 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Գառնիկ Մարտիրոսի Դալլաքյանին և Հայկանուշ Սարգսի Դալլաքյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի N 19 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 139.18 (մեկ հարյուր երեսունինն ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին, 108.9 (մեկ հարյուր ութ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 379266 (երեք հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր վաթսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Գառնիկ Մարտիրոսի Դալլաքյանին և Հայկանուշ Սարգսի Դալլաքյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

30.11.2023

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» նոյեմբերի 2023 **թվականի** N 3019-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԹՈՒՐ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՕԶԱՆՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ (ԿԱՄՈՒՐՋԻ ՎՐԱ) ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ( ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Արթուր Սիմոնյանի 2023 թվականի նոյեմբերի 10-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի նոյեմբերի 13-ին 24412 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել Ա/Ձ Արթուր Սիմոնյանին Գյումրի քաղաքի Օզանյան փողոցում (կամուրջի վրա) տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (պաստառ) ընդհանուր 3 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի դեկտեմբերի 01-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 01-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Արթուր Սիմոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«30» նոյեմբերի 2023 թվականի N3018-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇՉԵԴՐԻՆԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 161.18 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 161.18 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (136.3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Շչեդրինի փողոցի հարևանությամբ 161.18 (հարյուր վաթսունմեկ ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված է 161.18 (հարյուր վաթսունմեկ ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (136.3 (հարյուր երեսունվեց ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով սպասարկման օբյեկտ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Արա Խաչատրյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023NPYQAR ծածկագիրը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի քաղաքի Շչեդրինի փողոցի հարևանությամբ 161.18 (հարյուր վաթսունմեկ ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 161.18 (հարյուր վաթսունմեկ ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (136.3 (հարյուր երեսունվեց ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով սպասարկման օբյեկտը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Արա Խաչատրյանին
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

30.11.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«30» նոյեմբերի 2023 թվականի N 3017-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 48 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՆՈՐԻԿ ԳՐԻԳՈՐԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ 117.27 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 585.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Համլետ Սարգսյան փողոցի N 48 հասցեի համայնքապատկան հողամասում, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցվել է բնակելի շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Նորիկ Գրիգորի Գասպարյանը:

Քաղաքացի Նորիկ Գրիգորի Գասպարյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի և բնակելի շինությունների նկատմամբ Նորիկ Գրիգորի Գասպարյանի սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով և հիմք ընդունելով շինությունները Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023C4JD9D ծածկագիրը և քաղաքացի Նորիկ Գրիգորի Գասպարյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2020 թվականի փետրվարի 24-ին N 2786 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Նորիկ Գրիգորի Գասպարյանի (ծնված 1950 թվականի օգոստոսի 22-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Համլետ Սարգսյան փողոցի N 48 հասցեում գտնվող 400.0 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 117.27 (մեկ հարյուր տասնյոթ ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունների նկատմամբ:
2. Գյումրի քաղաքի Համլետ Սարգսյան փողոցի N 48 հասցեում գտնվող տանը կից, սահմանված չափից ավել օգտագործվող 185.2 (մեկ հարյուր ութսունհինգ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված անկառուցապատ հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Նորիկ Գրիգորի Գասպարյանին, տվյալ հողամասի՝ մինչև 2021 թվականի հունվարի 01-ը գործող կադաստրային արժեքով, որը կազմում է 1914 (մեկ հազար ինը հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը 354473 (երեք հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր յոթանասուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սահմանված կարգով կնքել ավել օգտագործվող 185.2 (մեկ հարյուր ութսունհինգ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):

5. Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Նորիկ Գրիգորի Գասպարյանի միջոցների հաշվին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Նորիկ Գրիգորի Գասպարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.11.2023

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# *Ո Ր Ո Շ Ու Մ*

**«30» նոյեմբերի 2023 թվականի N 3016-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 2695-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 30-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս N4/57 հասցեի համայնքապատկան 19.08 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 19.80 քառակուսի մետր արտաքին (18.60 քառակուսի մետր ներքին) մակերեսով առևտրի և սպասարկման օբյեկտի հատվածը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N2695-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել որոշման մեջ տեղ գտած բացթողման պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 30-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս N4/57 հասցեի համայնքապատկան 19.08 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 19.80 քառակուսի մետր արտաքին (18.60 քառակուսի մետր ներքին) մակերեսով առևտրի և սպասարկման օբյեկտի հատվածը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N2695-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.
   1) Նախաբանի վերջում լրացնել <<հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2022KG9QSV ծածկագիրը >> բառերը և թվերը
   2) Վերնագրում <<19.08>> թիվը փոխարինել <<19.80>> թվով

30.11.2023

X [signature]

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«30» նոյեմբերի 2023 **թվականի** N 3015-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ 24Ա ՇԵՆՔ N1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՄԻ ՄԱՍԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Սպանդարյան փողոց 24ա շենք N1 հասցեի բնակարանը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Անդրեաս Հովհաննեսի Խաչատրյանին, Հասմիկ Գրիգորի Խաչատրյանին, Հովհաննես Անդրեասի Խաչատրյանին և Հենզել Անդրեասի Խաչատրյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 1993640 վկայական):

Քաղաքացի Անդրեաս Հովհաննեսի Խաչատրյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն և Հասմիկ Գրիգորի Խաչատրյանին, Հովհաննես Անդրեասի Խաչատրյանին, Հենզել Անդրեասի Խաչատրյանին պատկանող Գյումրի քաղաքի Սպանդարյան փողոց 24ա շենք N1 հասցեի բնակարանի մի մասի՝ 35,30 (երեսունհինգ ամբողջ երեսուն հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սենքի գործառական նշանակությունը բնակելիից հասարակական՝ որպես առևտրի և սպասարկման օբյեկտ փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացի Անդրեաս Հովհաննեսի Խաչատրյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 23-ին N 22889 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Սպանդարյան փողոց 24ա շենք N1 հասցեի բնակարանի մի մասի ՛ 35,30 (երեսունհինգ ամբողջ երեսուն հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սենքի գործառական նշանակությունը, որպես առևտրի և սպասարկման օբյեկտ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Անդրեաս Հովհաննեսի Խաչատրյանին, Հասմիկ Գրիգորի Խաչատրյանին, Հովհաննես Անդրեասի Խաչատրյանին և Հենզել Անդրեասի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

30.11.2023

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ x Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ
Հեռ. (+374 312) 2-22-001; Ֆաքս (+374 312) 3-26-0
Էլ. փոստ gyumri@gyumri.ar

# ՈՐՈՇՈՒՄ

## <<ՄԱՄԱՆԵ>> ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«29»«նոյեմբերի» 2023 թվական N 3014 – Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի նոյեմբերի 27-ին ժամը 11:20-ին Գյումրի քաղաքում, համայնքապետարանի վարչական շենքում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, <<ՄԱՄԱՆԵ>> արտադրական կոոպերատիվ -ի նախագահ՝ Մամիկոն Եղիշեի Գրիգորյանի (անձն.՝ AN 0222038, հասցե՝ ՀՀ ՇՄ ք. Գյումրի, Պարոնյան փ., տուն 6, իրաբանական անձի ծածկագիր՝ 37334948, հարկ վճարողի հաշվառման համար՝ 05803336) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

<<ՄԱՄԱՆԵ>> արտադրական կոոպերատիվ –ի անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2021-2023 թթ. չվճարված հարկից (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված տեղեկանքը):

Վճարման ենթակա գումարը 31.03.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով ընդամենը՝ 146.081 (հարյուր քառասունվեց հազար ութսունմեկ ) ՀՀ դրամ գումար:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  ԵՄ

1. <<ՄԱՄԱՆԵ>> արտադրական կոոպերատիվ -ից հօգուտ՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 146.081 (հարյուր քառասունվեց հազար ութսունմեկ ) ՀՀ դրամ գումար :
2. <<ՄԱՄԱՆԵ>> արտադրական կոոպերատիվ -ի նախագահ՝ Մամիկոն Եղիշեի Գրիգորյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<ՄԱՄԱՆԵ>> արտադրական կոոպերատիվ -ի նախագահ՝ Մամիկոն Եղիշեի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

29.11.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2023 թվականի № 3013-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄԱՏՆԻՇՅԱՆ ՓՈՂՈՑ, 304 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №28082023-08-0020) ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արտաշես Հարոյանի լիազորված անձ Տիգրան Պապոյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված № 24613 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի, շինության բաժանման սխեմաները և հատակագծերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Մատնիշյան փողոց, 304 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №28082023-08-0020) տրամադրել հասցեներ.

1. 148.84 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝
**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ս. Մատնիշյան փողոց, 304/1 բնակելի տուն**
2. 111.04 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝
**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ս. Մատնիշյան փողոց, 304/2 բնակելի տուն**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2023 **թվականի №** 3012-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ, 57Ա ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №03082023-08-0041) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Սամվելյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №25002 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Աբովյան փողոց, 57ա բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №03082023-08-0041) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Խ. Աբովյան փողոց, 53/1 բնակելի տուն**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2023 թվականի № 3011-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՓՈՂՈՑ, 6Ա ՇԵՆՔ, 7 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №12022020-08-0015) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Աննա Գրիգորյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №25353 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Խրիմյան Հայրիկի փողոց, 6ա շենք, 7 բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №12022020-08-0015) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Թբիլիսյան խճուղի, 6ա շենք, 7 բնակարան**

29.11.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«29» Սեպտեմբերի 2023 թվականի № 3010-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱԶՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 142,32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1324-0007) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի հարևանությամբ գտնվող 142,32 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1324-0007) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Մազմանյան փողոց, 22/1 հողամաս**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«29» [illegible] **2023 թվականի №3009Ա**

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՇՉԵԴՐԻՆԻ ՓՈՂՈՑ, 5Բ ՇԵՆՔ, 20 (ՎԿԱՅԱԿԱՆ №10092020-08-0023) ԵՎ ՇՉԵԴՐԻՆԻ ՓՈՂՈՑ, 5Բ ՇԵՆՔ, 21/1 (ՎԿԱՅԱԿԱՆ №03072023-08-0005) ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Գայանե Ոսկանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №24499 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Շչեդրինի փողոց, 5բ շենք, 20 (վկայական №10092020-08-0023) և Շչեդրինի փողոց, 5բ շենք, 21/1 (վկայական №03072023-08-0005) բնակարանների միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մ. Շչեդրինի փողոց, 5բ շենք, 20 բնակարան**

X [illegible]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ
Հեռ. (+374 312) 2-22-001; Ֆաքս (+374 312) 3-26-0
Էլ. փոստ gyumri@gyumri.ar

## Ո Ր Ո Շ Ու Մ

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՂԱՍԻ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԹՈՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«29» «նոյեմբերի» 2023 թվական N 3008 – Ա

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի նոյեմբերի 28 -ին ժամը 11:10-ին Գյումրի քաղաքում, համայնքապետարանի վարչական շենքում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի Աղասի Պատվականի Թորոսյանի ( հասցե՝ ք.Գյումրի, Օդանավակայան թղմ., բն. 39/3) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

### 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Աղասի Պատվականի Թորոսյանի անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2008-2020թթ. չվճարված հարկից (հիմք՝ AK0280284, ՀԾՀ՝ 1908580259 ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N29683428324613903, N 796746657295114310 տեղեկանքը):

Վճարման ենթակա գումարը 29.08.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով ընդամենը՝ 67.659 (վաթսունյոթ հազար վեց հարյուր հիսունինը ) և 43.427 ( քառասուներեք հազար չորս հարյուր քսանյոթ), 10.896 (տաս հազար ութ հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ գումար:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Քաղաքացի ՝ Աղասի Պատվականի Թորոսյանից հօգուտ՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել ՝ 67.659(վաթսունյոթ հազար վեց հարյուր հիսունինը ) և 43.427( քառասուներեք հազար չորս հարյուր քսանյոթ), 10.896 (տաս հազար ութ հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ գումար:
2. Քաղաքացի՝ Աղասի Պատվականի Թորոսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Աղասի Պատվականի Թորոսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

28.11.2023

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ
Հեռ. (+374 312) 2-22-001; Ֆաքս (+374 312) 3-26-0
Էլ. փոստ gyumri@gyumri.ar

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՐԳԻՍ ԿԱՐԱՊԵՏԻ ԿՈՒՊԱԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«29» «նոյեմբերի» 2023 թվական N 3007 – Ա

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի նոյեմբերի 27 -ին ժամը 11:00-ին Գյումրի քաղաքում, համայնքապետարանի վարչական շենքում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի Սարգիս Կարապետի Կուպալյանի ( հասցե՝ ք.Գյումրի, Նեկրասովի փ., 20շենք ) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

### 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Սարգիս Կարապետի Կուպալյանի անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2013-2020թթ. չվճարված հարկից (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N 796746925941104756 տեղեկանքը) :

Վճարման ենթակա գումարը 01.09.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով՝ ընդամենը՝ 21,582 ( քսանմեկ հազար հինգ հարյուր ութսուներկու ) ՀՀ դրամ գումար:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝

Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:
<<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  ԵՄ**

1. Քաղաքացի ՝ Սարգիս Կարապետի Կուպալյանից հօգուտ՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել 21,582 ( քսանմեկ հազար հինգ հարյուր ութսուներկու ) ՀՀ դրամ գումար:
2. Քաղաքացի՝ Սարգիս Կարապետի Կուպալյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Սարգիս Կարապետի Կուպալյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

28.11.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<29>> նոյեմբերի 2023 թվականի N 3006 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆԱԶԵԼԻ ՋԻՈՎԱՆԻԻ ԷԼԲԱԿՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Նազելի Ջիովանիի Էլբակյանի 2023 թվականի նոյեմբերի 17-ի դիմումը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Նազելի Ջիովանիի Էլբակյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2023 թվականի դեկտեմբերի 1-ից:

**2.** Ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 20 աշխատանքային օր՝ 2023 թվականի դեկտեմբերի 1-ից 28-ը ներառյալ:

**3.**Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Նազելի Ջիովանիի Էլբակյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի պետի տեղակալ Գրետա Վոլոդյայի Ջանոյանին:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նազելի Ջիովանիի Էլբակյանին և Գրետա Վոլոդյայի Ջանոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.11.2023

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2023 **թվականի** N 3005-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՆԱԻՐԱ ՍԱՄՎԵԼԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ № 5/3Ա ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 17.24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (13.12 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Տիգրան Գրիգորի Ասլանյանին և Նաիրա Սամվելի Ասլանյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ սեփականության իրավունքի վկայական № 2017257 տրված 17 հուլիսի 2006 թ.) Գյումրի քաղաքի Հ. Սարգսյան փողոց № 5/3ա հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 17.24 (տասնյոթ ամբողջ քսանչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (13.12 (տասներեք ամբողջ տասներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Նաիրա Սամվելի Ասլանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023QHHTJ5 ծածկագրով մուտքագրման տեղեկանքը և քաղաքացի Նաիրա Սամվելի Ասլանյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հունիսի 29-ին № 13680 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Տիգրան Գրիգորի Ասլանյանին և Նաիրա Սամվելի Ասլանյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հ. Սարգսյան փողոց № 5/3ա հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 17.24 (տասնյոթ ամբողջ քսանչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (13.12 (տասներեք ամբողջ տասներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 46979 (քառասունվեց հազար ինը հարյուր յոթանասունինը) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Տիգրան Գրիգորի Ասլանյանին և Նաիրա Սամվելի Ասլանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

29.11.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2023 **թվականի** N3004-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՍՏՂԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ 8Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Աստղիկ Պետրոսյանի 2023 թվականի նոյեմբերի 22-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի նոյեմբերի 22-ին 25211 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել Ա/Ձ Աստղիկ Պետրոսյանին Գյումրի քաղաքի Տ. Մեծ 8ա հասցեի պատի ճակատային մասում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 0.5 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2023 թվականի դեկտեմբերի 04-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 04-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Աստղիկ Պետրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

28.11.2023

ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2023 **թվականի** N 3003-Ա

**ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ № 75/2 ՀԱՍՑԵԻ 50.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Կամոյի փողոց № 75/2 հասցեի 50.0 (հիսուն ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Կամոյի փողոց № 75/2 հասցեի 50.0 (հիսուն ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

29.11.2023

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2023 **թվականի** N 3002-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԹԱԹՈՒԼ ՍԱՄՎԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԵՐՑԵՆԻ ՓՈՂՈՑ № 16 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 61.38 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Թաթուլ Սամվելի Գրիգորյանին պատկանող (հիմք՝ սեփականության վկայագիր № 9512) Գյումրի քաղաքի Գերցենի փողոց № 16 հասցեի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 61.38 (հիսունչորս ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Թաթուլ Սամվելի Գրիգորյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023FWSLPW ծածկագրով մուտքագրման տեղեկանքը և քաղաքացի Թաթուլ Սամվելի Գրիգորյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հուլիսի 14-ին № 14765 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Թաթուլ Սամվելի Գրիգորյանին պատկանող Գյումրի քաղաքի Գերցենի փողոց № 16 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 61.38 (հիսունչորս ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Թաթուլ Սամվելի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

29.11.2023

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«29» Նոյեմբերի 2023 **թվականի** N 3001-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 185/1 ՀԱՍՑԵԻ ԽԱՆՈՒԹԻՆ ԿԻՑ 32.68 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 32.68 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 26.03 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԽԱՆՈՒԹԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Վարդան Ալբերտի Խոջոյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 1123449 վկայական) Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի N 185/1 հասցեի խանութին կից 32.68 (երեսուներկու ամբողջ վաթսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 32.68 (երեսուներկու ամբողջ վաթսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 26.03 (քսանվեց ամբողջ երեք հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով խանութ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Վարդան Ալբերտի Խոջոյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող տեղեկանքը N 2023CYQEEE)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի N 185/1 հասցեի խանութին կից 32.68 (երեսուներկու ամբողջ վաթսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 32.68 (երեսուներկու ամբողջ վաթսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 26.03 (քսանվեց ամբողջ երեք հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով խանութը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Վարդան Ալբերտի Խոջոյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

28.11.2023

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**